


ՍԵՐԲԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ.
ՀԱՅԵՐԷՆ ՏԱՊԱՆԱԳՐԵՐ ԲԵԼԳՐԱԴԻՑ

Արսեն Յարուֆիևեան

Հայ գաղթաշխարհի պատմութեան ուսումնասիրման համար աղբիւրագիտական մեծ արժէք ունեն նոյն վայրերում պահպանուած հայերէն վիճակաւ արձանագրութիւնները, որոնք թէ՛ թուագրման եւ թէ՛ բովանդակային առումներով կարող են նոր լոյս սփռել Հայ համայնքի կազմաւորման, գոյութեան եւ տարաբնոյթ այլ հարցերի վրայ: Այս տեսանկիւնից բացառութիւն չէ նաեւ նախկին Հարաւայաւիայի կազմում ընդգրկուած Սերբիայի Հանրապետութեան հայ գաղթաշխարհը, որն, ինչպէս պատմական աղբիւրներն են անուղղակիօրէն վկայում, ձեւաւորուել է առնուազն ԺԲ-ԺԳ. դդ.¹: Այստեղ հայերի գոյութեան մասին վկայող վաղագոյն եւ ստոյգ յիշատակութիւնը մայրաքաղաք Բելգրադից ոչ հեռու՝ հիւսիսարեւելեան Սերբիայի Բրանիչեւո մարզի Վիտովնիցա բնակավայրի համանուն վանքի 1218 թ. երկղեզու (հին սլաւոներէն-հայերէն) չինարարական արձանագրութիւնն է, որը կրող մարմարեայ սալն ագուցուած է եկեղեցու հիւսիսային դռան վերնամասում, ներքուստ²: Չնայած այն քանիցս հրատարակուել է, այդուհանդերձ, հարկ ենք համարում հայերէն հատուածը վերստին վկայակոչել եւ մի լրացում անել:

Արձանագրութիւնն ընդհանուր 7 տողից է, 3 տող՝ սլաւոներէն, 4 տող՝ հայերէն: Յաւոք, բնագրի բոլոր տողերի սկզբնամասից 2-3 տառ ջարդուած է, ինչը, սակայն, չի խանգարում վերծանութեան ամբողջացմանը.



ՅԱՆՈՒՆ ՀԱԻՐ ԵՒ ՈՐԴՈՅ ԵՒ ՄԲ
ՀՈՅԳՈՅՆ, ԵՍ՝ ԼԱՏՈՆ, ՊԱ/ՊՈՒԿԱՅ
ՈՐԴԻՆ, ՕԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻ
ՅԱՆՈՒՆ ՄԲ ԱԿՈՒԱՅ ՀԱՅՐԱ/ՊԵՏԻ
ԵՒ ՄԲ ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ,
ՅԻՇԱՍԱԿ ԻՆՁ ԵՒ ԾՆՈՂԱՅ Ի/ՄՈՑ ...
ՄԲ ԵԿԵՂԵՅՑԻՍ, Ի ԹՈՒԱԿԱՆԸՍ ...
ՀԱՅՈՑ Ի :Ո:Կ:Է: (1218) ՇՐ³:

3 Արձանագրութեան հայերէն հատուածի սերբերէն թարգմանութիւնն առաջինը հրատարակել է հնագետ Ջորջէ Բոշկովիչը, որը նաեւ վիճագիրը եմթարարար վերագրել է հարեւանութեամբ գտնուող Օրեշկովիցա գիւղի երբեմնի եկեղեցուն – Բ. Бошковић, Средњовековни споменици североисточне Србије, "Српска Академија Наука. Старијар, Орган Археолошког Института САН", нова серија, књ. I, Београд, 1950, с. 185. Ծարտարապետութեան դոկտոր Յովհաննէս Խալիպաչեանի կարծիքով՝ արձանագիրը քարի եւ Վիտովնիցայի եկեղեցու շարուածքի քարերի համեմատութիւնը պարզում է, որ արձանագրութիւնը հեղինակը այդ վանքինն է եւ անմիջականօրէն կապում է նրա կառուցման ժամանակաշրջանի հետ (Օ. X. Халпахчян, К вопросу об армяносербских культурных связях, - ՊԲՀ, 1971, թիւ 2, էջ 259): Աւելի ուշ արձանագրութեան անդրադարձել են Հր. Բարթիկեանը (Հր. Բարթիկեան, Հայերէն երկու վիճագիր արձանագրութիւն Հարաւայաւիայի տարածքում, - ՊԲՀ, 1990, թիւ 3, էջ

1 Հայ գաղթաշխարհի պատմութիւն (միջնադարից մինչեւ 1920 թ.), հտ. Ա. «Միւտնակամ աշխարհի եւ հիւսիսային Կովկասի հայկական գաղութները», [«Սերբիա, Նորվայի տեքստի հետեւ»՝ Ա. Յովհաննէս, հրատարակութեան պատրաստեց եւ խմբագրեց ակադ. Վ. Միքայէլեանը, Երեւան, 2003, էջ 132:
2 The Cultural Treasury of Serbia, Edited by Jovan Janićijević, Belgrade, 2002, p. 289.

Դատելով արձանագրութեան բովանդակութիւնից՝ Հայոց ՈԿԷ., այսինքն՝ 1218 թ. Պապուկի որդի Լատոն (Լադո) Ս. Յակոբ հայրապետի եւ Ս. Պետրոս առաքելի անուանակիր եկեղեցի է կառուցել՝ իր եւ ծնողների յիշատակին: Լատոն անձնանունն այլ յիշատակութիւններ մեզ յայտնի չեն, ուստի տեղին է բիւզանդագէտ Հր. Բարթիկեանի այն դիտարկումը, թէ վիճագիրն ուշագրաւ է ոչ միայն հայերի՝ դեռեւս ԺԳ. դարասկզբին Սերբիայում հաստատուելու ու բազմամարդ համայնք ունենալու առումով, քանի որ եկեղեցու կառուցումն ինքնին այդ է վկայում, այլեւ լեզուաբանական ու անձնանունների ուսումնասիրման տեսանկիւնից⁴: Գրեթէ նոյնաբովանդակ է նաեւ արձանագրութեան սլաւոներէն հատուածը, որը նոյնիսկ օգնել է հայերէն բնագիրն ամբողջացնելուն: Տարբերակն այստեղ արտայայտուած է աշխարհի արարչութեան կամ արարչութեան Կոստանդնուպոլսի (բիւզանդական) թուականով, երբ վկայուած 6726 տարեթիւը մեր ներկայ թուականին վերածելու համար անհրաժեշտ է այդ թուականից հանել 5508, այսինքն՝ 6726-5508=1218⁵:

Հր. Բարթիկեանի հաղորդմամբ՝ երկղեզուեան արձանագրութիւնը յատուկ ուշագրութեան է արժանացրել սերբ հնագէտ-ճարտարապետ Ջորջէ Բոշկովիչը, որն իր երկու ուսանողների՝ Միլան Ստանիսլաւեւիչի եւ Մուխարեմ Մախիչի հետ 1947 թ. ամռանը ծանօթացել է Վիտովնիցայի վանքի յիշեալ արձանագրութեանը, որի սլաւոներէն հատուածը հրատարակուած էր: 1948 թ. վիճագրի հայերէն մասը Բոշկովիչի

խնդրանքով վերծանել է անուանի արուեստաբան Սիրարփի Տէր-Ներսէսեանը: Սերբերէն թարգմանութիւնը Բոշկովիչը հրատարակել է 1950-ին: Ս. Տէր-Ներսէսեանը ենթադրել է, որ վիճագիրը Վիտովնիցա վանքինն է, որն ըստ բնագրի՝ կառուցուել է ոմն Լատոյի մեկենասութեամբ, Ս. Յակոբ հայրապետի եւ Ս. Պետրոս առաքելի անուններով⁶: Հետաքրքիր են վիճագրի վերջում նկատելի անկապակից երկու տառերը՝ որոնք, ըստ Հր. Բարթիկեանի, հաւանաբար վերաբերում են ամիս-ամսաթուին, քանի որ սլաւոներէն բնագրում թուականից յետոյ դրանք առկայ են: Մեր կարծիքով, այս երկտառ համառոտագրութիւնն առաջին հայեացքից կարող է գրչի անուան կրճատ ձեւը կամ ստորագրութիւնը լինել, ինչպիսիք վիճագրերում քանիցս հանդիպում են. Մանասէ գրչի՝ Լմբատովանքում (1216 թ.), Շապուհ գրչի՝ Վայքում (1222 թ.), Վարհամ գրչի՝ Ս. Հռիփսիմէ վանքում (1296 թ.) եւ այլք: Ընդ որում, վիճագրիչները սովորութիւն են ունեցել իրենց անունները փակագրել, դադտնագրել եւ նման այլ հնարքների դիմել⁷: Բնուող վիճագրում, ըստ էութեան, գործ ունենք գրչի անուան կրճատ գրութեան հետ, որը կարելի է կարգաւ օրինակ՝ Շար (Շառ) կամ Շարա(յ), Շեր, Շէր եւ այլն⁸: Յիշատակուածներէն առաջինը մեզանում վկայուած է հենց ԺԳ. դարում: Տեղերի վանքի Ս. Աստուածածին եկեղեցու 1234 թ. մի նուիրագրում յիշատակուած Շառը վանքին նուիրա-

6 Հր. Բարթիկեան, Աշ. աշխ., էջ 127:
7 Միջնադարեան հայ ճարտարապետներից ու քարգործ վարպետներից բացի, վիճագրագետ Սերբիա Բարխուդարեանը յատուկ անդրադարձել է նաեւ հայերէն վիճագրերի գրիչներին՝ ներկայացնելով իրեն յայտնի գրիչների ժամանակագրական ցանկը (62 անուն): Մանրամասն տե՛ս Ս. Բարխուդարեան, Միջնադարեան հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ, Երեւան, 1963, էջ 198-206:
8 Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ., Երեւան, 1948, էջ 148, 150-151, 159, 161:

127-128), Բ. Սիմոնեանը (Բ. Симонян, Армяне в Сербии в XIII-XX веках, «Աճի», 2006, թիւ 3, էջ 15), Ա. Յովհաննէսյանը (Հայ գաղթաշխարհի պատմութիւն (միջնադարից մինչեւ 1920 թ.), հտ. Ա, էջ 133):
4 Հր. Բարթիկեան, Աշ. աշխ., էջ 128-129:
5 Ա. Արքանասեան, Հայոց գիր եւ գրչութիւն, Երեւան, 1973, էջ 125:

տուռութիւն է արել, որի դիմաց Ս. Գրիգոր Լուսաւորչի տօնին երկու պատարագ է ստացել Շնահաւորիկի եւ Քեմիայի անուններով. «ՈՉԳ. (1234), ողորմութեամբն Աստուծոյ, ես՝ Շառս, միաբանեցա սուրբ ուխտիս եւ ետու սակաւ ընծա...»⁹:

Արձանագրութեան վերաբերեալ այլ է ուսումնասիրողներից Յովհաննէս Խալփախչեանի տեսակէտը: Անդրադառնալով Հայ-սերբական դարաւոր յարաբերութիւններին՝ նա վկայակոչում է Վիտովնիցայի յիշեալ արձանագրութեան բնագիրն ու Ս. Տէր-Ներսէսեանի կարծիքը՝ յաւելելով, որ յիշատակուած սրբերից միայն Ս. Յակոբին պիտի եկեղեցին նուիրուած լինէր, քանի որ Հայ իրականութեան մէջ ընդունուած էր զոյգ անուններով կոչել միայն Ս. Պօղոս-Պետրոսին, հետեւաբար՝ Ս. Յակոբին յաջորդող Հայրապետ բառը հարկ է ընկալել իբրեւ վանքի սպասաւոր, վանահայր, որն է նշան երախտագիտութեան պէտք է Ս. Պետրոս առաքեալի տօնին պատարագ մատուցէր մեկենաս Լատոյի եւ նրա ծնողների յիշատակին¹⁰: Այս հարցում լիովին ընդունելի է Հր. Բարթիկեանի դիտարկումը, ըստ որի՝ յիշատակուած սուրբը Յակոբ Մծբնայ Հայրապետն է¹¹: Մեր կարծիքով, եկեղեցին իրաւամբ կոչուել է նշուած սրբերի անուններով, որտեղ թերեւս ամփոփուել են նաեւ նրանց նշխարներից: Նկատենք, որ երկու տարբեր սրբերի անուններով է կոչուում նաեւ ՀՀ Կոտայքի մարզի Կարենիս գիւղի Ս. Անդրէաս եւ Ս. Մատթէոս առաքեալների վանքը, որի աւագ խորանի տակ պահպանուած փոքրաչափ դամբարանի արեւելեան խորշում վերջերս յայտնաբերուել է իր կառուցուածքով եզակի երկտեղանի սարկոֆագ: Այստեղ ըստ ամենայնի ամփոփուել են սրբերի մա-

9 Ս. Կարապետեան, *Տեղերի վանքը*, «Վարձք», 2013, թիւ 10, էջ 24, արձ. ԻԳ. (23):
10 Օ. Халпахчьян, *ԱԶ. աշխ.*, էջ 260:
11 Հր. Բարթիկեան, *ԱԶ. աշխ.*, էջ 127-128, ծնթ. 3:

սունքները¹²: Վիտովնիցա վանքի եռախորան դմբեթաւոր ճարտարապետական յորինուածքը, ինչպէս նաեւ հիւսիսային պատին ագուցուած երկլեզուեան արձանագրութիւնը նկատառելով՝ Յ. Խալփախչեանը կարծում է, որ այս վանքը պէտք է որ կառուցած լինեն Հայ վարպետները¹³, հայազգի մեծահարուստ Լատոյի միջոցներով, իսկ վիմագրի նախ սլաւոներէն, ապա հայերէն գրութիւններն ինքնին վկայում են Հայ համայնքի՝ տեղի կառավարչներից կախուած լինելու հանգամանքը¹⁴:

Մենք այսքան չէինք ծաւալուի յիշեալ արձանագրութեան շուրջ, եթէ չլինէր սերբահայ համայնքի՝ այս անգամ Ժէ.-ԺԼ. Ղզ. պատմութեան լուսաբանման համար կարեւոր աղբիւր համարուող հայերէն երեք տապանագրերի հրատարակութեան առիթը¹⁵: Նշենք, որ ներկայացուող արձանագրութիւնները, որոնք գտնուում են բելգրադեան

12 А. Казарян, *Реликви в архитектуре средневековой Армении*, - «Восточнохристианские реликви», ред. А. Лядов, Москва, 2003, էջ 101-102: Հմմտ. Դ. Միրիջանեան, *Կարենիսի վանքի Անդրեաս եւ Մատթէոս առաքեալների սարկոֆագ-մատուցարանը*, «Հայաստանը եւ արեւելքի ստորագրութեան քաղաքակրթութիւնը. Բ», Հայագետ-բիւզանդագետ Կարէն Իւզրաշեանի (1927-2009) ծննդեան 90-ամյակին նուիրուած միջազգային գիտաժողով (դեկտեմբերի 7-8, 2017 թ.), Երեւան, 2017, էջ 184:

13 Աւելի վաղ այսօրինակ տեսակետ է յայտնել ֆրանսիացի հնագետ եւ պատմաբան Գարրիէլ Միլլեթը, որի համոզմամբ սերբական եկեղեցու հիմնադիր Ս. Սավան ԺԳ. դարի առաջին կեսին Սերբիա է հրատարակել նաեւ ազգութեամբ հայ ճարտարապետների եւ վարպետների, որոնք մասնակցութիւն են ունեցել սերբական եկեղեցիների շինարարութեանը (G. Millet, *L'Ancien Art Serbe. Les eglises*, Paris, 1919, էջ 45, հմմտ. Հայ գաղթաշխարհի պատմութիւն (միջնադարից մինչեւ 1920 թ.), հտ. Ա. էջ 132):

14 Օ. Халпахчьян, *նշ. աշխ.*, էջ 262:

15 Բելգրադի հայերէն տապանագրերը 2018 թ. լուսանկարել եւ հնագետ Գայիանէ Քոչարեանի խորհրդով մեզ է տրամադրել Արմէն Համբարձումեանը, իմէի համար խորին շնորհակալութիւն եմք յայտնում:

ամրոցի տարածքում¹⁶, դեռեւս 1993 թ. աշնանն ընդօրինակել ու վերծանել է գրող, թարգմանիչ, ներկայումս Հայաստանում Սերբիայի Հանրապետութեան պատուաւոր հիւպատոս Բաբէյն Սիմոնեանը, որը տապանագրերը հրատարակել է նախ կից սերբերէն թարգմանութեամբ, ապա մամուլում՝ հայերէն, աւելի ուշ՝ ռուսերէն¹⁷: Մեր վերլուծութեանն ու հրատարակութիւնը պայմանաւորուած է տապանագրերից մէկի նախորդ վերծանութեան յստակեցմամբ, ինչպէս նաեւ՝ դրանք վիմագրագիտութեան արդի սկզբունքներով ներկայացմամբ՝ կից գրչագրերով¹⁸ եւ լուսանկարներով, անհրաժեշտ ծանօթագրութեամբ:

Նախքան տապանագրերի վերծանութեանն անցնելն անդրադառնանք դրանց ներկայիս գտնուելու վայրին: Հայերը Բելգրադում հաստատուել են դեռեւս ԺԶ. դարի երկրորդ կէսին. այդ են վկայում ԺԶ.-ԺԷ. Ղզ. ճանապարհորդ-տեղագիրների նկարագրութիւնները (Ստ. Գերլախ, Ա. Պուլէ, է. Բրաուն եւ այլք)՝ ի դէմս գերմանացի ճանապարհորդ Պրանդտեմների 1608 թ. Բելգրադի նկարագրութեան, որտեղ յիշատակում է նաեւ հայկական գերեզմանոցը, ուր ԺԷ. դարի կէսերին բելգրադահայերը կառուցել են հայկական ե-

16 Բելգրադեան ամրոցը, որը գտնուում է Սաւա եւ Դանուբ գետերի միախառնման տեղում, Բելգրադի պատմական ճշմարտ կենտրոններից մէկն է: Այն կարեւոր դեր է ունեցել ինչպէս ուղանալի, այնպէս էլ միջնադարի վաղ ու զարգացած շրջափուլերում: Այսօր այն Բելգրադի տեսարժան վայրերից է եւ զբոսաշրջիկների սիրելի կայանը: Ամրոցի պատմութեան մասին տե՛ս *The Cultural Treasury of Serbia*, էջ 236-237:

17 Մեր խորին շնորհակալութիւնն եմք յայտնում պարոն Բաբէյն Սիմոնեանին՝ մասնագիտական գրականութեան հետ կապուած հարցերի պարզաբանման եւ որոշ լուսանկարների տրամադրման համար:

18 Գոչարեանները մերն են, բացառութեամբ 1218 թ. առաջին արձանագրութեան գոչապատկերի, որը վերցրել եմք համացանցից:

կեղեցի¹⁹: Ցաւօք, յուշարձանները մեզ չեն հասել, հետեւաբար դրանց մասին վկայող «մասունքները» տեղագրական յիշատակութիւններն ու պահպանուած երեք արձանագիր տապանաքարերն են: Անշուշտ, ԺԷ.-ԺԸ. Ղզ. Բելգրադի Հայ համայնքը ստուարացել է՝ պայմանաւորուած մի կողմից ջալալիների շարժման՝ 1595-1628 թթ. Հայաստանում եւ շրջակայքում պարբերաբար կրկնուող ապստամբութիւնների, միւս կողմից պարսից շահ Աբաս Ա.-ի իրագործած գաղթի հետեւանքով հայերի՝ աշխարհի տարբեր երկրներում, այդ թւում՝ Սերբիայում ապաստան գտնելու հանգամանքներով: Փաստօրէն, ջալալիների աւարառութիւնները, երաշտն ու սովը, ինչպէս նաեւ ժողովրդի բռնի տեղահանումն առիթ հանդիսացան հայութեան տարահանման²⁰: Դէպքերի ականատես, ժամանակագիր Գրիգոր Դարանաղցու հաղորդմամբ՝ 1604 թ. սուլթան Մուհամմադին յաջորդում է սուլթան Ահմադը, որի օրօք «Ջալալիքն զաշխարհն Անատոլեաց ծածկեալ էին որպէս զձիւն... որ ոչ գոյր խաղաղութեան տեղի ուրեք, բայց միայն ի Կոստանդնուպոլիսս եւ ի Թրակացոց աշխարհիս, որ Ուլուսնել ասի: Վասն որոյ աշխարհ ամենայն՝ Հայք եւ տաճիկք աստ հաւաքեալ եւ ցրուեալ մինչեւ ցԲելլըդատն (Բելգրադ - Ա. Յ.), մինչեւ ցաշխարհն Պուղտանաց եւ Գոթացոց եւ ամենայն Իւսկուլթացոց»²¹: Մէկ այլ հաղորդմամբ՝ 1605 թ. բազմաթիւ հայեր Կաֆայից եկան Ստամբուլ, ապա «...չատք այլ յետոյ եկին եւ ցրուեցան յԱնատոլ եւ յՈւլուսնէլս՝ յամենայն քաղաքս,

19 Բ. Սիմոնեան, *Բելգրադի հայկական արձանագրութիւնները*, «Առեւտում», 1997, թիւ 19, էջ 16:
20 Ջալալիների շարժման եւ դրա հետեւանքով հայ ժողովրդի կրած գրկանքների մասին մանրամասն տե՛ս Մ. Ջուլալեան, *Ջալալիների շարժումը եւ հայ ժողովրդի վիճակը Օսմանեան կայսրութեան մէջ (XVI-XVII դդ.)*, Երեւան, 1966:
21 *Ժամանակագրութիւն* Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ, Երուսաղէմ, 1915, էջ 18:

մինչ ի Պելլորդատ (Բելգրադ – Ա. Յ.), մինչ Պոլղոտանաց աշխարհն եւ Լեհաց»²²:

Բնակութիւն հաստատելով Սերբիայի տարբեր քաղաքներում՝ յատկապէս՝ Բելգրադում եւ Նովի Սադում, հայերը կառուցել են եկեղեցիներ, ունեցել իրենց հոգեւոր-մշակութային կեանքը, զբաղուել հիմնականում վաճառականութեամբ եւ բարձր դիրք գրաւել երկրի բնակչութեան ունեւոր խաւի շրջանում: 1634 թ. նոյեմբերի 18-ին հասնելով Եւրոպա՝ Մինաս գրիչն այսպէս է նկարագրում Բելգրադը.

Ողորմութեամբն աստուածային,
Հասաք աւան Դանոք գետին,
Որ էր քաղաք դղեակ նմին,
Ջոր Պելկրատ վերածայնին...
Մտաք դղեակ գիւղ աւանի,
Ջոր Պելկրատ նա որ ասի:
Խիստ մխիթար տեսաք զսա,
Որ մոռացուց վիշտս մեր սա,
Յամեն բարեաց լցեալ էր սա,
Առատութեամբ ծուկն, որ ի սմա²³:

22 Նոյն տեղում, էջ 69:

23 Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.), հտ. Բ, աշխատասիրությունը՝ Յ. Սահակեանի, Երեւան, 1987, էջ 311: Հարկ է նշել, որ Բելգրադում նաև ձեռագրեր են ընդօրինակուել, որոնցից մեկը պահուում է Նիւրնբերգի (Գերմանիա) քաղաքային գրադարանում: Այն Տաղարան է՝ գրուած Հայոց ՌՃԼԷ. (1688) թուականին, Բելգրադի Ա. Աստուածածին եկեղեցու հովանու ներքոյ, գրիչը՝ Առաքել դպիր Սկիթարցիին է, պատմիրատուն՝ Ընդմեցի խոջա Խաչիկի որդի խոջա Փանոսը: Ձեռագրի գրչության լիջատակարանում այդ մասին կարդում ենք հետևեալը. «...գրեցա Տաղարանս լաւ եւ ընտիր, ի մայրաքաղաքն Պելլորդաթ (Բելգրադ - Ա. Յ.), որ թարքմանի պէլէկ մի տէս, ի դոտն Սուրբ Աստուածածնայ... ձեռամբ անիմատ եւ անարծան եւ անպիտան ուսկուսարցի Առաքել դպրոյս, ի թվաբերութեանս Հայոց ՌՃ. ամի ԼԷ. թիւ հետն ատելի, մարտի ԻԲ. (22), օրն Ե.շի (հինգշաբթի), ի հայրապետութեան Սուրբ Էջմիածնայ սրբապանեալ, արհմեալ կաթողիկոսին մերոյ տեսան Եղիազարո եւ ի թագաւորութեան տանկաց սուլթան Սուլէյմանին... ի վայելումն Ընդմեցի խոջա Խաչ(ի)կի որդի խոջա Փանոսին...» (տե՛ս

Սերբիայի հայերը գաղթել են հիմնականում Վանից, Կարինից, Նախիջևանից, Երեւանից եւ այլ բնակավայրերից: Ինչպէս փաստում է Բ. Սիմոնեանը, նշանաւոր հայերի՝ առեւտրականների ու արհեստաւորների մեծ խումբը, Սերբիա է գաղթել յատկապէս Շոռոթից²⁴: Ստորեւ վկայակոչուող տապանագրերը նախ եւ առաջ հէնց հայ գաղթականութեանն են բնութագրում:


Թէ ինչպէս են տապանաքարերը հասել բելգրադեան ամրոցի տարածք, պարզել է Բ. Սիմոնեանը: Դիմելով Սերբիայի պատմական յուշարձանների պահպանութեան վարչութեանը՝ Բ. Սիմոնեանը պարզել է, որ մինչեւ 1918 թ. տապանաքարերը գտնուել են սերբ իշխանուհի Լիւբիցայի բելգրադեան առանձնատան նկուղում, որտեղից տեղափոխուել են Բելգրադի ազգային թանգարան, իսկ 1971-ից փոխադրուել ամրոցի ներկայիս վայրը՝ ի տես այցելուների: Բ. Սիմոնեանի հանդիպումը հնագէտ Մարկո Պոպովիչի հետ նոր բացայայտման առիթ է դարձել, քանի որ պարոն Պոպովիչի ժողոված փաստավաւերագրական աղբիւրներն ապացուցում են, որ առնուազն ժէ. դարասկզբին Բելգրադում հայկական գերեզմանոց է եղել, որտեղից էլ, ըստ էութեան, ծագում են ներքոնշեալ տապանա-

Armenische Handschriften, beschrieben von J. Assfalg and J. Molitor, Wiesbaden, 1962, էջ 75-76, Հմր 16): Առաւել ուշագրաւ է Կ. Պոլսում՝ 1678 թ. գրուած և ներկայումս ԱՄՆ Բալթիմոր քաղաքի Ուոլթերեան պատկերասրահի ձեռագրական հաւաքածոում գտնուող Հմր 547 Օարակնոցը, որի լիջատակարանի համաձայն՝ գրիչ Յակոբ երեցն իրեն բելգրադի է կոչում. «...գրեցա ձեռամբ Պելիգրատցի (բելգրադցի - Ա. Յ.) Յակոբ երեցվէ, ի մայրաքաղաքն Կոստանդինուպոլի, ի թվականիս Հայոց ՌՃԼԷ. (1678), օգոստոս ամսոյ ժԵ. (15)» (Յիշատակարանն ամբողջութեամբ տե՛ս Armenian Manuscripts in the Walters Art Gallery, by S. Der-Nersessian, Baltimore, 1973, էջ 91-92): Այս վերջին տեղեկությունը մեզ հաղորդելու համար շնորհակալութիւն ենք յայտնում լեզուաբան Խաչիկ Յարութիւնեանին:

24 Б. Симонян, Армяне в Сербии в XIII-XX веках, с. 21.

քարերը: Բելգրադ քաղաքի ժէ. դարի յատկագծային տուեալների հիմամբ յաջողուել է պարզել, որ հայկական գերեզմանատունն ու եկեղեցին գտնուել են քաղաքի Օբելիչեւ Վենաց եւ Յարիցա Միլիցա փողոցների միջեւ²⁵:

Բելգրադի հայերէն տապանագրերից ժամանակագրորէն վաղագոյնը, որը բաւականին լաւ է պահպանուել փոքրաչափ եւ ստորին ճախ անկիւնը ջարդուած ուղղանկիւն քարին, եռատող է.




ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՎԱՆԵՑԻ / ՅՈՒԱՆԻՆ, ԹՎԻՆ / ՌՃԼԷ. (1685)²⁶:

Ըստ համառօտ արձանագրութեան՝ ննջեցեալը ծագումով Վանից Յուանն է (Յունան), որը վախճանուել է 1685 թ.:

25 Բ. Սիմոնեան, Բելգրադի հայկական արձանագրությունները, «Առեւտում», 1997, թիւ 19, 16:

26 Б. Симоьян, Кроз балканску ватру. Путотиси, есеји, разговори (друго, допуњено издање), Београд, 1995, էջ 204, նոյնի՝ Բելգրադի հայկական արձանագրությունները, էջ 17, նոյնի՝ Армяне в Сербии в XIII-XX веках, էջ 20:

Առաւել խօսուել է չափերով անհամեմատ մեծ ուղղանկիւնաձեւ տապանաքարի արձանագրութիւնը, որը զետեղուած է քարի հարթ մակերեսին արուած մարդկային գրաֆիկ պատկերի ներսում՝ 4 տող.



ՇՆՈՐՕՔ ԱՄԵՆԱՅԶՁՕՐԻՆ ԱՅ / ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱԶԱՄ ՇՆՈՒՅԻՑԻ ՄՈՒՐԱՏԻ ՈՐԴԻ ՍԱՄՈՒԷԼԻՆ, ՈՐ ՓՈՍԵՑԱԻ ԱՌ ՔԱ ԹՎԻՆ / ՌՃԼԷ. (1714), ՄԱՐԴԻ ԱՄՍՈՒՆ Ժ.ԻՆ (10) ԵՂԵԻ²⁷:

Այս արձանագրութիւնը նոյնպէս լաւ է պահպանուել. վնասուած են միայն վերջին տողի սկզբնամասում թրուականի առաջին երկու միաւորները, որոնք հեշտ վերականգնելի են: Փորագրուել է ըստ ամենայնի ազգութեամբ հայ հմուտ վարպետի ձեռքով, որը տիրապետել է հայ վիճագրութեան աւանդական ձեւերին՝ կցագրութեանը, համառօտագրութիւններին: Տապանագրերը կարելի է համարել ժամանակի հայ գաղթօջախներում պահպանուած լաւագոյն նմուշներից մէկը:

27 Б. Симоьян, Кроз балканску ватру, էջ 203, նոյնի՝ Բելգրադի հայկական արձանագրությունները, էջ 17, նոյնի՝ Армяне в Сербии в XIII-XX веках, էջ 20:

Դառնանք բովանդակութեանը. վիճաբարի առաջին հրատարակիչ Բ. Միմոնեանի վերծանութեան համաձայն՝ ննջեցեալը ծագումով Շոռոթից Սամուէլի որդի աղա Մուրադն է, որը վախճանուել է 1714 թ. մարտի Դ.-ին (4) (իրականում՝ մարտի Ժ.-ին (10))։ Տապանագրի մեր վերընթերցումը պարզեց որոշ մանրամասներ. ննջեցեալը Մուրադի որդի Սամուէլն է, որը միգուցէ իրականում աղա պատուանունն է կրել, բայց տապանագրում այդ մասին վկայուած է։ Այդպէս վերծանութեան համար թիւրիմացութեան տեղիք է տուել շոռոթցի տեղանունը նախորդող Աջամ բառը, որի վերջին ԱՄ գրերը կցադրուած են։ Հայոց բարբառային բառարանում Աջամ կամ Աճամ բառը մեկնաբանուած է պարսիկ, ապա՝ Պարսկաստան իմաստներով²⁸։ Մեր կարծիքով՝ բառիմաստը պարսկաֆայ տարբերակով պէտք է բացատրել, քանի որ Միմոնեաց աշխարհը եւ նրա կազմում գտնուող Երնջակ գաւառը Ժէ. դարասկզբից Սեֆեան իրանի Նախիջեւանի խանութեան կազմում էր՝ ընդհուպ մինչեւ 1828 թ. Թուրքմենչայի ոռու-պարսկական դաշնագրով Արեւելեան Հայաստանի ազատագրումն ու անցումը Ռուսաստանի տիրապետութեանը²⁹։ Շոռոթցի Մուրադի որդի Սամուէլը, որը սերում է Երնջակ գաւառի երբեմնի նշանաւոր գիւղաքաղաքից, 1714 թուակիր տապանագրում բնորոշուած է որպէս Աջամ, այսինքն՝ պարսկահայ կամ մարդ, որը ծագումով Պարսկահայքից է։ Վիճաբարական այս բացառիկ յիշատակութիւնը թերեւս պէտք է պայմանաւորել ժամանակի քաղաքական իրադրութեամբ, երբ Հայաստանի հեռուոր գաղթօջախում վախճանուածի տապանագրում հարկ է համարուել նշել նաեւ հայրենի երկրի

պարսկական տիրապետութեան տակ գտնուած լինելու հանգամանքը, ինչն ուղղակիօրէն խթանել է հայոց գաղթն ու ժողովրդի՝ օտար ափերում հանգչելու ու օտար հողում ամփոփուելու երեւոյթը։

Բառիս այսպէրպէս մեկնաբանման օգտին է վկայում Ա. Յովակիմեանի այն բնորոշումը, թէ 1730-ականներին Բելգրադում ապրում էր մօտ 200 հայ, մեծ մասը՝ Պարսկաստանից, այսինքն՝ «աջեմ» էին, իսկ 1733 թ. Բելգրադում մեկնարկած հայկական եկեղեցու կառուցման ծախսերի հիմնական մասը հոգացին շոռոթցի «աջեմները»³⁰։ Աջամ-աջեմ նոյնիմաստ բառի կիրառումն իբրեւ պարսկահային բնորոշող կոչում, ըստ էութեան, մասսայական բնոյթ է կրել ԺԸ. դարում, որն արտայայտուել է նաեւ հայ վիճաբարական մէջ։

Նախիջեւանի վիճաբարական ժառանգութիւնը, այդ թւում նաեւ՝ Շոռոթի վիճաբարը, տարիներ առաջ ընդօրինակել ու կորստից փրկել է նախիջեւանագէտ Արգամ Այվազեանը։ Ներկայացնելով բնակավայրի ու տեղի պատմաճարտարապետական յուշարձանների պատմութիւնը՝ գիտնականը միայն Շոռոթից հրատարակել է 235 վիճաբար, որից 207-ն՝ առաջին անգամ³¹։ Շոռոթ գիւղաքաղաքը պատմական աղբիւրներում յիշատակուած է ԺԳ. դարից։ Այնտեղ դեռեւս միջնադարում զարգացած է եղել վաճառականութիւնն ու արհեստագործութիւնը։ Տեղի վաճառականները, ովքեր առեւտրային լայն կապեր են ունեցել առաջատար երկրների (Իտալիա, Աւստրիա, Ռուսաստան, Հնդկաստան) հետ, զբաղուել են նաեւ մեկենասութեամբ։ Սրա վառ օրինակը նախիջեւանցի Աղամալի միջոցներով Վաղարշապատի Ս. Շողակաթ եկեղեցու կառուցումն է, որի աւթիւ 1694 թուակիր ընդարձակ արձանագրու-

28 Հայոց լեզուի բարբառային բառարան, հտ. Ա., Երեւան, 2001, էջ 96:
 29 Ա. Այվազեան, Նախիջեւանի վիճաբարական ժառանգութիւնը, հտ. Դ., «Երնջակ գաւառ», Երեւան, 2008, էջ 8:

30 Հայ գաղթաշխարհի պատմութիւն (միջնադարից մինչեւ 1920 թ.), հտ. Ա., էջ 142:
 31 Ա. Այվազեան, Աշխ., էջ 63-86, արձ. 309-542:

թիւն է կազմուել ու փորագրուել եկեղեցու արեւմտեան մուտքի ճակատակալ քարին³²։ Կարծում ենք, որ մեկենասութեամբ է զբաղուել նաեւ խնդրոյ առարկայ տապանագրում յիշատակուած Մուրադի որդի Սամուէլը։ Մեր այս ենթադրութեան համար հիմք է հանդիսացել Շոռոթի կենտրոնում գտնուող երբեմնի Ս. Յակոբ գմբեթաւոր բազիլիկ յօրինուածքով եկեղեցու թմբուկի 1704 թուակիր շրջանաձեւ արձանագրութիւնը, որը գմբեթի նորոգմանն է վերաբերում, չնայած, որ վիճաբարի համաձայն՝ «...չինեցաւ կաթողիկէս եկեղեցւոյս ի հայրապետութեան տեսուն Աղեքսանդրի եւ առաջնորդութեան Սուրբ Կարապետին Միմէնն վարդապետի, արդեամբ Շոռօթայ իշխանաց Սամուէլին, էյվազին...»³³։ Յայտնի է, որ վիճաբարում «չինեցաւ» բառը կիրառուել էր նաեւ նորոգման դէպքում։ Այսպիսով, ժամանակային, ինչպէս նաեւ անձնանունական ու տեղանունական ընդհանրութիւնները թոյլ են տալիս ենթադրել, որ Բելգրադ գաղթած Սամուէլը պէտք է որ Ս. Յակոբի վիճաբարում յիշատակուած միեւնոյն անձը լինի։ Բացի այս, Սամուէլի բելգրադեան տապանաքարը եւ նրա վայելչագիր արձանագրութիւնը վկայում են, որ ննջեցեալը ժամանակի աղբեցիկ այրերից է եղել, ուստի տրամաբանական է, որ նրա մեկենասութեամբ նաեւ կարող էր նորոգուել իր հայրենի Շոռոթի՝ Ժէ. դարում վերակառուցուած Ս. Յակոբ եկեղեցու գմբեթը։

Երրորդ տապանաքարից փոքր բեկոր է պահպանուել. տապանագիրը մեծապէս վնասուել է։ Նախնական դրութեամբ այն եռատող է եղել.



ԱՅՍ Է ՏԱՊԱՂԱՍ ՄԱՂՏԵՍԻ ՄՈՒՍԷՍԻՆ / ՏՆԵՍԻՄՈՒՍ Ի ԹՈՒԻՆ ՌՄ... (1750-ից յետոյ)³⁴։

Տապանագրի երկրորդ տողի սկզբում ընթեռնելի ...ՀՏԵՍԻ տառաշարքը յուշում է, որ ննջեցեալը մահտեսի կոչումն է կրել, այսինքն՝ ուխտի է գնացել Երուսաղէմ՝ Տիրոջ գերեզմանին։ Անուան սկզբի ՄՈՒՍ... (ՈՒ՝ կցագրուած) տառերի առկայութիւնը թոյլ է տալիս ենթադրել, որ յիշատակուած է Մովսէս անձնանունու ՄՈՒՍԷՍ ձեւը։ Բ. Միմոնեանը տապանագիրը թուագրել է Ժէ.-ԺԸ. դդ.։ Մեր կարծիքով՝ ննջեցեալը վախճանուել է 1750-ականներից յետոյ, քանի որ երրորդ տողում պահպանուել է Մ եւ սրան նախորդող թոյլ նշմարուող Ռ-ի մի մասը, այսինքն՝ այս մասում հակուած ենք կարգալ թուականի սկզբի երկու նիշը՝ Հազարաւորն ու Հարիւրաւորը, որ են՝ ՌՄ... (1750-ից յետոյ)։

Բելգրադի երբեմնի հայկական գերեզմանոցի հայերէն արձանագրութիւնների վերընթերցումն ու հրատարակութիւնը հերթական առիթն էր Եւրոպայի հարա-

32 Ա. Յարութիւնեան, Վաղարշապատ. վանքերը եւ վիճակայն արձանագրութիւնները, Ա. Էջմիածին, 2016, էջ 338-339, արձ. 679:
 33 Ա. Այվազեան, Աշխ., էջ 64, արձ. 312:

34 Б. Симоњан, Кроз балканску ватру, էջ 205, Այն-Աի՛ Բելգրադի հայկական արձանագրութիւնները, էջ 17, Այն-Աի՛ Армяне в Сербии в XIII-XX веках, էջ 20:

լում գտնուող Սերբիայի Հանրապետության Հայկական ոչ մեծ գաղթօջախի պատմութեան գրաւոր էջերը հանրայնացնելու առումով: Անկասկած, հայերն այստեղ մշտապէս աչքի են ընկել իրենց բարձր դիրքով, արհեստագործական ու առեւտրային հմտութիւններով, մշակութային կապերի (նաեւ՝ գրաւոր մշակոյթի) լայն հնարաւորութիւններով: Պատահական չեն հայ եւ օտարազգի տեղադիրների նկարագրութիւններում անընդմէջ հանդի-

պող կառուցողական դրուագները, որոնք յաճախ բաւականին խօսուեն ու բնութագրական են համայնքի գոյութեան տարբեր փուլերը լուսաբանելու հարցում: Այսօր էլ Սերբիայում եւ, յատկապէս, Բելգրադում ապրում է շուրջ երեք հարիւր հայ: Չկորցնելով հայրենիքի հետ կապը՝ նրանք հնարաւորինս նպաստում են հայ-սերբական դարաւոր յարաբերութիւնների զարգացմանն ու ամրապնդմանը:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԱՆԳՍՏԱՐԱՆԻ ՎԻՄԱԳՐԵՐԸ*

Արծ. Սահակեան, Ա. Մանուչարեան, Հ. Խաթամաջեան, Ս. Յարութիւնեան

Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարեանի պարզաբանմամբ՝ «Ռուսական կառավարութիւնը երկրի հարաւի գրեթէ ամբողջաբանակ տափաստանները բնակեցնելու, տնտեսապէս իւրացնելու եւ Ղրիմի թաթարական խանութիւնը թուլացնելու նպատակով 1778 թ. կազմակերպեց թերակղզու հայ եւ յոյն բնակչութեան արտագաղթ:

Ղրիմահայերը հաստատուեցին Դոն գետի աջ ափին, հիմնեցին Նոր Նախիջևան քաղաքը եւ դրա շրջակայքում Չալթր, Թոփտի, Մեծ Սալա, Սուլթան Սալա, Նետուտա գիւղերը, իսկ յոյները հիմնեցին Մարիուպոլ քաղաքն՝ իր շրջակայքով:

Եկատերինա II կայսրուհու 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակով հայերին մեծ արտոնութիւններ տրուեցին: Նրանք ստացան ընդարձակ հողատարածութիւններ, 10 տարով ազատուեցին հարկերից, նաեւ նրանց վերապահուեց ազատ առեւտրի ու արդիւնագործութեան իրաւունք:

Տնտեսական առանձնաշնորհումներից բացի, հայերը ստացան դաւանանքի ազատութիւն եւ ազգային սովորութիւնների ու աւանդոյթների հիման վրայ, մայրենի լեզուով դատավարութեան ու գործավարութեան իրաւունք, որն իրականացւում

էր «Աստրախանի» կամ «Հայոց դատատանագրքի» հիման վրայ»¹:

Ինչ վերաբերում է նորաստեղծ ամենամեծ հայկական բնակավայրին, ապա Սարգիս արքեպս. Զալալեանի իրազեկմամբ՝ «Զհիմն այսր քաղաքի օրհնեաց Յովսէփ ազգասէր կաթողիկոսն Արղութեանց մեծաւ հանդիսիւ, եւ անուանեաց Նոր Նախիջևան»²: Անուան կապակցութեամբ Վ. Բարխուդարեանը յայտնում է, որ ուսումնասիրողների մի մասը, ելնելով այն հանգամանքից, թէ նոր վայրեր տեղափոխուածներն ամենուրեք աշխատում էին պահպանել նախկին հարազատ գիւղերի, վանքերի, եկեղեցիների անունները, եզրայանգել է՝ հայերը նորահաստատ քաղաքը Նախիջևան են անուանել Ղրիմի համանուն հայկական բնակավայրի յիշատակին (վերջինս, անշուշտ, անուանակոչուել է ի պատիւ զրիմահայերի նախնեաց հայրենիք Անի-Շիրակի Նախճաւանի), ումանք էլ «նախնական իջեւան արտայայտութիւնից են քաղաքի անունը մակարեւրում: Առաւել հաւանական է թւում գերիշխող տեսակէտը, ըստ որի՝ զրիմահայերի նորահաստատ քաղաքը կոչուել է Արարատեան դաշտի հնագոյն քաղաքի՝ Նոյի տապանի աւանդութեան հետ կապուած Նախիջևանի անունով»³:

1 Վ. Բարխուդարեան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմութիւն (1861-1917 թթ.), Երևան, 1985, էջ 5:
 2 Ծանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Աշխատասիրութեամբ Տեառն Սարգիս Սանաֆնեցույ Զալալեանց թեմակալ Արք. Եպիսկոպոսի Հայոց Վրաստանի, Իմէրէթի եւ այլոց, մասն Բ., Տփլիս, 1858, էջ 456-457:
 3 Վ. Բարխուդարեան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմութիւն (1779-1861 թթ.), Երևան, 1967, էջ 73-74:

* Սոյն աշխատանքը կատարուել է Նոր Նախիջևանի հայոց համայնքի եւ Արա այլ էթնիկ միջավայրի Ռես եղած կրօնամշակութային կապերին անուրում պատմաագագրական Ռեսագօտութեան շրջանակում, որը ֆինանսատրուել է Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդարանի կողմից՝ ՀՀ Գիտակետկոմի միջոցով: